

ԼՈՒՐԵՐ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՆԱՅՈՑ ԹԵՄԻՑ

3 Նոյեմբերին Գերմանիոյ Կաթողիկէ Եկեղեցւոյ Վիթընպէրկի շրջանի եպիսկոպոսական փոխանորդութեան կողմէ կազմակերպուած էր Նայոց Յեղասպանութեան 90-ամեակին նուիրուած ձեռնարկ մը, որուն Կաթողիկէ Եկեղեցւոյ հաւատարեցեալ անդամներու կողքին իրենց մասնակցութիւնը բերին այդ շրջանի մէջ պաշտօնավարող շուրջ 20 կաթողիկէ հոգեւորականներ: Ձեռնարկի սկզբնաւորութեան նախ փեղի ունեցաւ Նոյեմբերգիտան պաշտօն մը, որու աւարտին շրջանի հոգեւոր հովիւ Սերովրէ վրդ. Իսախանեան գերմաներէն լեզուով իր քարոզին մէջ ներկայ հոգեւորականներուն խնդրեց գալ, քարտուան ընթացքին իրենց աղօթքներուն մէջ յիշել հայ նահապակները եւ նաեւ նպաստել Նայոց Յեղասպանութեան Գերմանիոյ մէջ պաշտօնավարող ճանաչման աշխատանքներուն: Նոյեմբերգիտան արարողութեան իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Իշխան սրկ. Չիֆթեան:

Այնուհետ սրահին մէջ Նայոց Յեղասպանութեան մասին բանախօսեց Նայլէ-Վիթընպէրկի համալսարանի դասախոս, Տօթթ. Արմենուի Տրոսթ-Արգարեան: Բանախօսութեան աւարտին ներկաները Նայր Սուրբին եւ յարգարժան բանախօսին ուղղեցին զանազան հարցումներ Նայասարանի, Նայ Եկեղեցւոյ, հայ-թուրքական յարաբերութիւններու եւ այլ հարցերու շուրջ:

17-19 Նոյեմբերին Գերմանիա կը գտնուէր ՆՆ Նախագահ Ռուպերթ Քոչարեանը: Նախագահը այցելութեան ընթացքին հանդիպումներ ունեցաւ Գերմանիոյ նախագահի, վարչապետի եւ այլ պետական պաշտօնավար անձանց հետ:

Նախագահ Քոչարեանի ի պատիվ ՆՆ Գերմանիոյ Դեսպանութիւնը կազմակերպած էր համերգ մը, որը փեղի ունեցաւ 17 Նոյեմբերի երեկոյեան Պեռլինի Ժանարարմընմարթը համերգասրահին մէջ: Նամերգին ներկայ գտնուեցան պետական ու քաղաքական մարդերու եւ գերմանահայ հասարակութիւններու ներկայացուցիչներ եւ նաեւ թեմիս առաջնորդ Գերշ. Տ. Գարեգին արքեպս. Պեքեան՝ իր հետ ունենալով Պեռլինի հոգեւոր հովիւ Սերովրէ վրդ. Իսախանեան: Առաջնորդ Սրբազան առիթն օգտուելով Նախագահին փոխանցեց Գերմանահայոց թեմի բարի գալուստի ողջոյններն ու բարեմաղթանքները:

Նամերգին ելոյթ ունեցան Կորիւն Ասարեան, Քազուէօքի Օկիմթօ, Վարդան Մամիկոնեան եւ Սերկէյ Խաչատուրեան, ներկայցնելով հայ եւ եւրոպական համբաւաւոր երաժիշկներու աշխատանքները:

18-20 Նոյեմբերին Գերմանիոյ Պօխում քաղաքին մէջ փեղի ունեցաւ «Սփիւռքի եւ Յեղասպանութեան Ներագոյման Ինսթիթուի» հիմնադրման 10-ամեակին նուիրուած Գիտաժողով մը՝ մասնակցութեամբ եւ բանախօսութիւններով գերման շարք մը մասնագէտ-գիտնականներու:

Գիտաժողովին վերջին օրը Պօխումի թանգարանին մէջ փեղի ունեցաւ 10-ամեակին նուիրուած հանդիսութիւն մը, որուն բացումը կատարեցաւ «Սփիւռքի եւ Յեղասպանութեան Ներագոյման Ինսթիթուի» փնթըն Տօթթ. Միքիւրան Տապաղ: Նանդիսութեան ներկայ

գտնուեցան եւ ողջոյնի խօսքով 10-ամեակը շնորհաւորեցին Պօխումի առաջին քաղաքապետուհի Տօքթ. Օթթիլիէ Շօլց, Պօխումի համալսարանի տեսուչ Փրոֆ. Տօքթ. Վօլֆկանկ Վակնէր, Գերմանիոյ Հիսիս-Հռենոսեան Երկրամասի Գիտութեան եւ Հետազոտութեանց նախարար Պարոն Հարթմուք Քրեպս:

Հանդիսութեան ներկայ գտնուեցաւ եւ հիմնադրութեան 10-ամեակը շնորհաւորեց նաեւ թեմիս առաջնորդ Գարեգին արքեպս. Պեքճեան:

Հանդիսութեան երաժշտական բաժինը ստանձնած էին ջութակահար Արա Մալիքեան եւ դաշնակահար Սերոժ Արրաջեան:

20-21 նոյեմբերին առաջնորդանիստ Զեօլնի հայ համայնքի սրահին մէջ հովանաւորութեամբ թեմակալ առաջնորդ Գարեգին արքեպս. Պեքճեանի եւ ՏՀ Գերմանիոյ դեսպանուհի Տիկ. Կարինէ Ղազինեանի տնտեսական վերապատուելի Յօհաննէս Լեփսիուսի կողմէ 1914 թ. Պեռլինի մէջ հիմնադրուած «Գերման-Հայկական Ընկերակցութեան» 90-ամեակին նուիրուած գիտաժողով եւ հանդիսութիւն մը:

Հանդիսութեան ընթացքին առաջնորդանիստ Սուրբ Մահակ-Մեսրոպ առաջնորդանիստ եկեղեցւոյ մէջ տնտեսական գերմանահայ միաւորական եւ «Գերման-Հայկական Ընկերակցութեան» առաջին հայ արեւմտաւեր Տօքթ. Ռաֆֆի Զէպապչեան-Քանդեանին Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան «Սուրբ Մահակ-Սուրբ Մեսրոպ» պատուոյ շքանշանի տրուելու արարողութիւնը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի Սրբապատ Կոնդակը ընթերցելէ առաջ Տօքթ. Քանդեանի մշակութային եւ հասարակական գործունէութեան մասին խօսք առաւ Թեմական Խորհուրդի անդամ Տիկ. Մելինէ Փոկլման: Տօքթ. Քանդեանի ուղղեալ գնահատանքի խօսք ըսաւ նաեւ թեմակալ առաջնորդ Գարեգին արքեպս. Պեքճեան, որն ալ Վեհափառ Հայրապետի Սրբապատ Կոնդակի ընթերցումէն ետք, յանուն Նորին Սրբութեան կարարեց շքանշանի տրուելու:

Յետ փութութեան Տօքթ. Քանդեան իր երախտագիտութիւնը յայտնեց ազգիս Վեհափառ Հայրապետին իրեն Հայ Եկեղեցւոյ բարձր շքանշանին արժանացնելու համար:

Նորեկնական հանդիսութեան եւ փութութեան ընթացքին հայ եւ օտար երգահաններու ստեղծագործութեանց կատարումներով հանդէս եկան դաշնակահարուհի Սուսաննա Գրիգորեան եւ թաւջութակահար Թարա Ջանջազ:

ԴԻԲԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ